

ԼՐՕՑՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 26-ին, Հայֆիլհարմոնիայի Մեծ դահլիճում տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնդհանուր ժողովի բացումը, նվիրված Ակադեմիայի հիմնադրման 10-ամյակին: Դահլիճում ներկա էին գիտնականները, Ծրեանի պարտիական, սովետական կազմակերպությունների, արդյունաբերական և բարձրագույն ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները, եղբայրական ռեսպուբլիկաների գիտական հիմնարկությունների պատվիրակները, որոնք եկել էին Մոսկվայից, Լենինգրադից, Կիևից, Բարվից, Քրիլիսից, Աշխարադից և մեր երկրի տարբեր բազմաքանակից՝ մասնակցելու Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի 10-ամյա հոբելյանին:

Ներածական խոսքով Ակադեմիայի Հնդհանուր ժողովը բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ. ակադեմիկոս Վ. Համբարձումյանը:

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանը ասաց.

— Նոյեմբերի 29-ին լրանում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հիմնադրման 10-ամյակը:

Շնորհիվ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության հոգատար վերաբերմունքի՝ Հայաստանում, որտեղ մինչև ունյուցիան չի եղել ոչ մի գիտա-հետազոտական հիմնարկ, այժմ ստեղծվել է գիտա-հետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների ճյուղավորված մի ցանց, որը մտնում է Գիտությունների ակադեմիայի կազմի մեջ:

Գիտությունների ակադեմիայի հիմնադրումը հնարավոր եղավ շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանում ստեղծվեցին գիտականորեն պատրաստված շնորհալի կադրեր և անհրաժեշտ նյութական բազա:

Գիտական երիտասարդ կադրերի պատրաստման գործում խոշորագույն գեր խաղաց ուս գիտնականների օգնությունը. առանձնապես պետք է նշել այնպիսի հայտնի ուս գիտնականների, ինչպիսիք են՝ ակադեմիկոսներ Ի. Մ. Վինոգրադովի, Մ. Վ. Կելգիշի, Ս. Լ. Սորոլևի, Ի. Ն. Նազարովի և շատ ուրիշների հոգատար վերաբերմունքը մեր երիտասարդ գիտնականների աշխատանքի ղեկավարման գործում:

Հայաստանի Գիտությունների ակադեմիան իր կարևոր խնդիրներից մեկն է համարում զարգացնել այն լավագույն տրադիցիաները, որոնք հաղորդվել են մեր գիտական երիտասարդությանը ուս խոշոր գիտնականների կողմից, այն է՝ մասնագիտական հարցերի լավ ըմբռնում, ուսումնասիրվող հարցի լայն ընդգրկում, սերտ կապ գործնական կյանքի հետ և անսահման նվիրվածություն դեպի ժողովուրդը:

Իր աշխատանքում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան հասել է որոշ հաջողությունների: Այգ հաջողությունները կարող են հիմք ծառայել գիտական աշխատանքի նոր վերելքի համար:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան այժմ իր կազմում ունի հինգ բաժանմունք՝ Ֆիզիկո-մաթեմատիկական, Տեխնիկական, Բիոլոգիական, Գյուղատնտեսական և Հասարակական գիտությունների բաժանմունքներ, որոնցից յուրաքանչյուրն ունի մի քանի գիտա-հետազոտական ինստիտուտներ և լաբորատորիաներ:

Առանձնապես զգալի հաջողությունների են հասել Ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքի գիտնականները: Այս փաստը առավել հետաքրքրական է այն տեսակետից, որ մինչև ակադեմիայի հիմնադրումը Հայաստանում համարյա բացակայում էր գիտական աշխատանքը ֆիզիկո-մաթեմատիկական առարկաների գծով: Մոտավորությունների տեսության բազմաթիվ խնդիրներ լուծված են մաթեմատիկոսների երիտասարդ կոլեկտիվի կողմից, մի կոլեկտիվ, որն աշխատում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անգամ

Ա. Լ. Շահինյանի ղեկավարությամբ Այստեղ հատկապես պետք է նշել ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ս. Մ. Մերգելյանի և պրոֆեսոր Մ. Մ. Զրբաշյանի արդյունավետ աշխատանքները։ Նրանց հայտնագործությունները կապված են կիրառական մաթեմատիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի պրոբլեմների հետ։

Բաժանմունքն աշխատում է նաև մեխանիկայի խնդիրների վրա։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ն. Խ. Հարությունյանին են պատկանում խոշոր արդյունքներ՝ նյութերի սողունության տեսության բնագավառում։

Մեր ֆիզիկոսները լուրջ հետազոտություններ են կատարել կոսմիկական ճառագայթների կազմի ուսումնասիրության բնագավառում։

Անցած տարիների ընթացքում կազմակերպվել է Բյուրականի աստղադիտարանը, որտեղ օգալի աշխատանք է ձեռնարկված Գալակտիկայի կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում։ Այդ աստղադիտարանի կոնկրետիվ աշխատանքը օժանդակում է սովետական աստղագիտությանը՝ լուծելու երկնային մարմինների առաջացման և զարգացման պրոբլեմը։ Վերջին ժամանակներում աչքի են ընկել ֆիզիկո-մաթեմատիկական գիտությունների թեկնածու Բ. Ծ. Մարգարյանի աշխատությունները, որոնք նվիրված են աստղակույտների զարգացման հարցին։

Ժողովրդական տնտեսության կարևոր պրոբլեմների լուծման հետ է կապված Տեխնիկական գիտությունների բաժանմունքի աշխատանքը։ Երկրաբանները մեծ ջանքեր են նվիրում ռեսպուբլիկայի ընդերքում գտնվող հարստությունների հետազոտման գործին։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Գ. Մաղարյանի և երկրա-հանրաբանական գիտությունների թեկնածու Ս. Ս. Մկրտչյանի աշխատանքները ռեսպուբլիկայի մետալուրգիայի բնագավառում՝ հարստացնում են մեր դիտելիքները օգտակար հանածոների հանքավայրերի մասին։

Հայտնի է, որ Սովետական Հայաստանը շափազանց հարուստ է շինանյութերով։ Առանձնապես աչքի են ընկնում շինարարների տարբեր տեսակները, այդ թվում տուֆերը, ֆելզիտները, անտիդիտները, բազալտը և գրանիտը։ Առաջ բարի մշակումը կատարվում էր միայն ձեռքով։ Մեր գիտնականները ուսումնասիրեցին բարհատման հետ կապված ֆիզիկական պրոցեսներն ու ստեղծեցին քարհատ հաստոցներ, և այժմ բարի մշակումը ամբողջ ռեսպուբլիկայում մեքենայացված է։

Բետոնի ու երկաթբետոնի ուսումնասիրության գծով հետաքրքիր աշխատանքներ է կատարել տեխնիկական գիտությունների թեկնածու Մ. Զ. Սիմոնովը։ Այժմ թեթև բետոնը լայնորեն կիրառվում է մինչև անգամ հիդրո-տեխնիկական շինարարության մեջ։

Հիդրոտեխնիկական շինարարության համար խոշոր նշանակություն ունեն նաև այն աշխատանքները, որոնք կատարվում են Զրա-էներգետիկ ինստիտուտում, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ի. Վ. Եղիազարյանի գլխավորությամբ։

Հայտնի է, թե ինչպիսի մեծ թափով է զարգանում Հայաստանում բիմիական արդյունաբերությունը։ Մեր բիմիկոսները կարևոր աշխատանքներ են կատարել Հայաստանի հումքային ստորհասնների օգտագործման նոր ձևերի մշակման ուղղությամբ։ Այստեղ աչքի են ընկնում բիմիական գիտությունների թեկնածու Ա. Գ. Մանվելյանի և բիմիական գիտությունների դոկտոր Ա. Թ. Բարայանի աշխատանքները։

Լավ արդյունքների է հասել նաև էլեկտրոտեխնիկայի լարորատորիան՝ Մոսկվայի էլեկտրամեքենաշինական ինստիտուտի հետ համատեղ մշակելով էլեկտրոտրակտորի նոր սխեմա։

Մեր բուսաբաններն ուսումնասիրում են ռեսպուբլիկայի բուսական ռեսուրսները և կանաչապատման խնդիրները։ Այս բնագավառում աչքի ընկնող տեղ է գրավում բիոլոգիական գիտությունների դոկտոր Վ. Հ. Ղազարյանի աշխատանքը բույսերի ֆիզիոլոգիայի գծով։

Կենդանաբանական ինստիտուտը միջոցներ է մշակում կրծողների և գյուղատնտեսությանը վնասող այլ կենդանիների դեմ պայքար մղելու համար, ուսումնասիրում է ռեսպուբլիկայի կենդանական աշխարհը։

Հենվելով ռուս մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի ուսմունքի վրա, ֆիզիոլոգները մշակում են բարձր նյարդային համակարգության հարցերը։ Խոշոր նշանակություն ունեն նյութափոխանակման վերաբերյալ ֆիզիոլոգիական հետազոտությունները, որոնք կատարվում են բիոբիմիական մեթոդներով՝ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Խ. Բունյաթյանի ղեկավարությամբ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Լ. Մուշոյանի կողմից ղեկավարվող լարորատորիան մշակում է ղեղազործական բիմիայի հարցերը և ստեղծել է միշտ նոր բուժիչ պրեպարատներ։

Հայն խնդիրներ են ծառայած Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի առջև: Մեր գեներտիկների աշխատանքի արդյունքը եղավ գյուղատնտեսական կուլտուրաների մի շարք նոր, բերրառատ սորտերի ստեղծումը: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Հ. Գուլբանյանն առաջարկեց և ղգալի ցանքատարածության վրա արմատավորեց ցորենի նոր սորտ:

Պտղարուծության ինստիտուտը մեծ աշխատանք է կատարել՝ ռեսպուբլիկայում եղած պտղատու ծառերի բազմատեսակ սորտերը հայտնաբերելու ուղղությամբ:

Ագրոքիմիայի լաբորատորիան մշակում է Հայկական ՍՍՌ պայմաններում հողերի պարարտացման լավագույն եղանակները: Հողագետները պատրաստում են ռեսպուբլիկայի կուլտեսեսությունների հողային բարտեզները: Դա մեծ նշանակություն կունենա գյուղատնտեսական կուլտուրաների բերրատվության բարձրացման շատ հարցեր լուծելու համար:

Սակայն պետք է նշել, որ մենք գեո քիչ ենք բավարարում ռեսպուբլիկայի գյուղատնտեսության պահանջները: Դեռ բավականաչափ սերտ կապ չի հաստատված Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գիտնականների և կուլտեսեսությունների միջև:

Հայ ժողովրդի պատմության, գրականության, լեզվի և արվեստի բնագավառում մեծ թվով հետազոտություններ է կատարել Հասարակական գիտությունների բաժանմունքը: Վերջին տարիներս այդ ասպարեկում ձեռք բերված ամենալուրջ նվաճումը պետք է համարել Հայաստանի պատմության, գրականագիտության, լեզվաբանության հիմնական հարցերի քննադատական վերանայումը մարքսիստական-լենինյան թեորիայի տեսակետից: Այդ աշխատանքը դեռ շարունակվում է: Վերջին տարիներս հիշյալ բնագավառի մասին լույս տեսած մի շարք աշխատություններ ցույց են տալիս, որ հասարակական գիտությունների բնագավառում մարքսիստական-լենինյան մեթոդոլոգիայի կիրառման շնորհիվ ներկայումս գիտական աշխատությունների մակարդակը շատ ավելի բարձր է, քան մի քանի տարի առաջ:

Բավական հաջողություններ են ձեռք բերված Հայկական ՍՍՌ-ի հնագիտական ուսումնասիրության բնագավառում: Չնայած նրան, որ պեղումները մեր ռեսպուբլիկայի տերիտորիայում կատարվում են վաղուց, բայց նրանք երբեք չեն հասել այնպիսի թափի ու պլանավորվածության, ինչպես այժմ: Այդ պատճառով էլ զարմանալի չէ, որ մեր հնագետները մեկը մյուսի հետևից կատարում են կարևոր հայտնագործություններ: Ակադեմիայի 10-ամյակի հենց նախօրյակին հայտնաբերվել է հին հայկական արվեստի բացառիկ մի նմուշ՝ Գառնիում գտնվող մեր թվարկության 1—2-րդ դարերին վերաբերող մոզաիկան:

Հնագիտական պեղումների արդյունքները հարուստ նյութ են տալիս ուսումնասիրելու հայ ժողովրդի պատմական անցյալը:

Գրականության ինստիտուտը վերջին տարիներս հրատարակեց հայ գրականության կլասիկներ Խ. Աբովյանի, Հ. Թումանյանի, Մ. Նալբանդյանի և Գ. Սունդուկյանի ստեղծագործությունները:

Հետաքրքիր հետազոտություններ է կատարում լեզվի ինստիտուտը: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ հանգուցյալ Հ. Աճառյանը ավարտեց «Հայոց լեզվի լիակատար բերականությունը՝ համեմատած 562 լեզուների հետ» աշխատությունը: Ներկայումս ինստիտուտը տպագրության է պատրաստել այդ ֆունդամենտալ աշխատության երկրորդ հատորը, որն ընդգրկում է դերանուններն ու նրանց տեսակները՝ հայոց լեզվում և աշխարհի մյուս լեզուներում:

Վերևում մենք բերեցինք միայն մի քանի օրինակ Գիտությունների ակադեմիայի աշխատանքից: Այդ օրինակները կարելի է բազմացնել: Դրանք վկայում են այն մասին, որ Գիտությունների ակադեմիային այս տասը տարիների ընթացքում հաջողվել է ունենալ որոշ նվաճումներ: Սակայն պետք է ասել, որ այժմ Գիտությունների ակադեմիայի առաջ գրվում են ավելի խոշոր և բարդ խնդիրներ: Սովետական Միության Կոմունիստական պարտիայի 19-րդ համագումարը մեր գիտնականների առաջ խնդիր դրեց համաշխարհային գիտության մեջ գրավել առաջին տեղը: Այդ խնդրի իրականացումը բոլոր սովետական գիտնականներից, այդ թվում նաև մեր ակադեմիայի գիտնականներից, կպահանջի վերացնել բազմաթիվ թերություններ գիտական աշխատանքում: Մասնավորապես անհրաժեշտ է, որ ակադեմիան ավելի արդյունավետ աշխատի գյուղատնտեսական գիտությունների բնագավառում և դրանով օգնի կուլտեսեսային գյուղատնտեսությանը՝ իրագործելու ՍՄԿՊ Կենտկոմի Սեպտեմբրյան պլենումի որոշումները: Մենք չափազանց քիչ ենք աշխատում լայն սպառման առարկաների արդյունաբերությանն օգնելու ուղղությամբ: Այս թերությունը ևս պետք է վերացվի ամենակարճ ժամանակամիջոցում:

Չնայած նրան, որ մեր գիտական կադրերի որակը բավականաչափ աճել է անցած տարիների ընթացքում, սակայն նոր խնդիրների լուծումը, նոր էքսպերիմենտալ մեթոդների արմատավորումը ինստիտուտներում՝ պահանջում է մեր բոլոր գիտնականներից, սկսած լաբորանտից մինչև ակադեմիկոսը, անընդհատ սովորել և բարձրացնել սեփական գիտական մակարդակը:

Կադրերի գիտական մակարդակի բարձրացումը, ինչպես նաև առողջ բնագաղափարային և ինքնաբնագաղափարային լայն կիրառումը գիտական աշխատանքում՝ հնարավորություն կտան մեզ խուսափելու այն բանից, երբ լույս են տեսնում ոչ լիարժեք գիտական աշխատություններ:

Ակադեմիայի գոյության երկրորդ տասնամյակի շեմին նրա ամբողջ կոլեկտիվը բաջ գիտակցում է, որ գիտության հաջողությունները մեր ռեսպուբլիկայում անհնարին կլինեին՝ առանց եղբայրական ռեսպուբլիկաների ակադեմիաների և առանձնապես ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի գիտնականների հետ ամենասերտ համագործակցության: Ահա ինչու մենք պետք է ավելի ևս ամրապնդենք այդ համագործակցությունը:

Մեր բազմազգ Հայրենիքի բոլոր գիտնականների միահամուռ աշխատանքը թույլ կտա լուծելու այն խնդիրները, որոնք Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության կողմից այսօր դրվում են սովետական գիտության առջև:

* * *

Ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ներածական խոսքից հետո «Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մ. Ներսիսյանը:

— Հայ ժողովրդի պատմությունը թափանցում է դարերի խորքը, — ասում է զեկուցողը: Այդ պատմությունը ներկայացնում է ժանր փորձությունների, ճնշման, ավերածությունների մի շղթա:

19-րդ դարի սկզբին Հայաստանի միացումը Ռուսաստանին փոխեց հայ ժողովրդի ճակատագիրը: 1828 թ. ռուս բաջարի զորքերը ազատագրեցին Արևելյան Հայաստանը պարսկական լծից: Այդ ժամանակից հայ ժողովուրդը իր բախտը հավերժ կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի հետ:

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան ցույց տվեց ազատության և երջանկության համար ժողովրդի պայքարի ուղին: Հայ ժողովուրդը կատաղի պայքարի դուրս եկավ իր հարստահարիչների՝ անդլո-ամերիկյան իմպերիալիստների տիրապետության դեմ: Հայ ժողովրդի հերոսական պայքարը պսակվեց հաջողությամբ: 1920 թվականի նոյեմբերին Հայաստանի վրա ծածանվեց սովետական դրոշմը: Հայ ժողովուրդը ռուս մեծ ժողովրդի օգնությամբ, Հայաստանում հաստատեց սովետական իշխանություն, բռնեց կոմունիստական շինարարության լուսաշող ուղին:

Ապա զեկուցողը նշեց այն հսկայական հաջողությունների մասին, որ ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական միասնական ընտանիքում հայ ժողովուրդը անձնվեր աշխատանքով ձեռք է բերել ռեսպուբլիկայի, Լեոնոմիկայի և կուլտուրայի զարգացման ասպարեզում: 33 տարվա ընթացքում Հայաստանը դարձել է առաջավոր ինդուստրիայի, զարգացած գյուղատնտեսության ռեսպուբլիկա, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական բազմահարուստ կուլտուրայի ռեսպուբլիկա:

Չեկուցումից հետո ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի նախագահության անունից ողջույնի խոսքով հանդես եկավ ակադեմիկոս Մ. Տիխոմիրովը: Ուկրաինական Ակադեմիայի կողմից ողջունեց Ուկրաինական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Կասյանենկոն, Բելոռուսական Ակադեմիայից՝ Բելոռուսական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Վ. Պոպովը, Ադրբեջանի Գիտությունների ակադեմիայից՝ Ադրբեջանական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Մ. Ալիևը, Վրացական Ակադեմիայից՝ Վրացական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Բարամիձեն, Թուրքմենստանի Ակադեմիայից՝ Թուրքմենական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Ս. Մամեդովը, Սերևանի Վ. Մ. Մոլոտովի անվան Պետական համալսարանի անունից ողջույնով հանդես եկավ համալսարանի ռեկտոր Գ. Պետրոսյանը:

Ժողովում հրապարակվեցին նաև Ուղրեկական, Կապախական, Լատվիական, Լիտվական, Տաջիկական Գիտությունների ակադեմիաներից, սովետական խոշոր գիտնականներից, արտասահմանյան առաջադեմ գիտնականներից և ռեսպուբլիկական հասարակական կազմակերպություններից ստացված ողջույնի բազմաթիվ հեռագրերը:

ժողովի առաջին նիստը փակելուց առաջ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Համբարձումյանը Հայաստանի գիտնականների անունից շնորհակալություն հայտնեց եղբայրական ուսպուրիկանների գիտնականներին՝ ողջույնների համար, և Հայաստանի գիտնականներին հետագա հաջողություններ ցանկացավ նրանց աշխատանքներում:

Նոյեմբերի 27-ի առավոտյան տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի տասնամյակին նվիրված Ընդհանուր ժողովի երկրորդ նիստը: Այդ նիստում լսվեց ակադեմիկոս Վ. Համբարձումյանի «Քյուրականի աստրոֆիզիկական աստղադիտարանի աշխատանքների արդյունքները աստղագոյացման հարցերի գծով» զեկուցումը: «Ռադիոակտիվ ինդիկատորները մեթոդները ազդեցիկություն և այդ քննազավառում առաջին հետազոտությունների արդյունքները Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Գ. Դավթյանը:

Նոյեմբերի 27-ի երեկոյան եզրափակիչ նիստում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Հ. Մաղաբյանը կարդաց զեկուցում՝ «Մետալոգենիկ գոտիները և մետալոգենիական մասնագիտացման որոշ օրինաչափությունները» թեմայի շուրջը: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Ալիխանյանը զեկուցեց Ակադեմիայի Ֆիզիկայի ինստիտուտի աշխատանքների մասին:

Ապա Ընդհանուր ժողովը գաղտնի քվեարկությամբ ընտրեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ և հաստատեց թղթակից-անդամներին:

Ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ Դերենիկ Կարապետի Դեմիրճյանը, Բիոլոգիական գիտությունների գծով՝ Արմենակ Լևոնի Մնջոյանը:

Ընդհանուր ժողովը թղթակից-անդամներ հաստատեց Հասարակական գիտությունների բաժանմունքի գծով՝ Սուրեն Տիգրանի Երեմյանին, էգուսբեգ Բագրատի Աղայանին, Ֆիզիկոմաթեմատիկական գիտությունների բաժանմունքի գծով՝ Սերգեյ Նիկիտի Մերգելյանին, Մխիթար Մկրտչի Զրբաշյանին, Տեխնիկական գիտությունների բաժանմունքի գծով՝ Մարտին Վահանի Կասյանին, Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի գծով՝ Գեղամ Խաչատուրի Աղաջանյանին:

* * *

Նոյեմբերի 23-ից մինչև 26-ը, Ակադեմիայի Ընդհանուր ժողովի բացման նախօրյակին կայացան Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկոմաթեմատիկական գիտությունների, Տեխնիկական գիտությունների, Բիոլոգիական գիտությունների, Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքների հորնյանական նիստերը: Այդ նիստերում կարդացվեցին մոտ 50 գիտական զեկուցումներ, որոնք նվիրված էին ժողովրդական տնտեսության և կուլտուրայի հետագա զարգացման հարցերին և այն ընդհանուր պրոբլեմներին, որոնք կապված են հայրենական գիտության զարգացման հետ:

Բաժանմունքների նիստերը գրավում էին մեծ թվով ունկնդիրներ, որոնք մեծ հետաքրքրությամբ լսում էին հայ գիտնականների զեկուցումները գիտության և տեխնիկայի հետագա զարգացման հարցերի վերաբերյալ և դրանով իսկ նպաստում աշխատավորության մեջ գիտության հաջողությունների պրոպագանդային:

Նոյեմբերի 24-ին կայացավ Հասարակական գիտությունների բաժանմունքի առաջին նիստը: Բաժանմունքի ակադեմիկոս-բարտուղար Ա. Հովհաննիսյանը իր ներածական խոսքում համառոտ կերպով ընթացեց բաժանմունքի դիտական հիմնարկների կատարած գիտահետազոտական աշխատանքը պատմության, լեզվաբանության, գրականության, արվեստի, տնտեսագիտության և փիլիսոփայության քննազավառում: Ա. Հովհաննիսյանը միաժամանակ նշեց այն թեմաները, որոնք գոյություն ունեն բաժանմունքի աշխատանքներում, նշեց այն խնդիրները, որոնք կանգնած են բաժանմունքի գիտական հիմնարկների առջև:

Առաջին զեկուցումով «Ռուս-հայկական հարաբերությունների պատմությունից» հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Լ. Մելիքսեթ-Քեկը: «Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու դեմ արևմտա-եվրոպական պետությունների պայքարի պատմությունից» թեմայի շուրջը զեկուցում կարդաց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Ա. Հովհաննիսյանը: Տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Բադալյանը կարդաց զեկուցում «Հայկական ՍՍՌ կոլխոզների համախառն և ապրանքային արտադրանքի բարձրացումը» հարցի մասին:

Հասարակական գիտությունների բաժանմունքի երեկոյան նիստում «Վասպուրական տան

9—10-րդ դարերի պատմիչների բաղաբառական նպատակադրությունը թեմայի շուրջը զեկուցումով հանդես եկավ ակադեմիկոս Հ. Օրբելին: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Մ. Շահինյանը կարդաց զեկուցում «Նորագույն սովետական գրականության մի բանի հարցերի մասին» թեմայի շուրջը: Բաժանմունքի նիստին Հայաստանի հնագիտական պեղումների արդյունքների և հեռանկարների մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիտրովսկին: Ունկնդիրների մոտ մեծ հետաքրքրություն առաջացրեց Գառնիի հնագիտական պեղումների արշավախմբի պետ, պատմական գիտությունների թեկնածու Բ. Առաքելյանի հաղորդումը՝ Գառնիում վերջերս գտնված հնագույն մոզաիկայի մասին: Այդ մոզաիկայի գունատիպ պատճենն բնական մեծությամբ ցույց տրվեց հանդիսականներին:

Նոյեմբերի 25-ի Հասարակական գիտությունների բաժանմունքի եզրափակիչ նիստում Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի իսկական անգամ Գ. Ղափանցյանը կարդաց զեկուցում «Պալա լեզուն» թեմայի շուրջը: Հայ բարբառագիտության հարցերի շուրջը զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Ա. Ղարիբյանը: «Ամերիկյան իմպերիալիզմի և նրա գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից» թեմայի մասին զեկուցում կարդաց պատմական գիտությունների թեկնածու Ա. Մնացականյանը:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հորելյանական սեսիան ցույց տվեց, որ անցած 10 տարիների ընթացքում մեր ռեսպուբլիկայի գիտնականները մշակել են մի շարք կարևոր պրոբլեմներ և մեծ աշխատանք են կատարել ներգրելու գիտության արդյունքները ժողովրդական տնտեսության զանազան ճյուղերի մեջ: Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիան մտնելով իր ներկրորդ տասնամյակը, ձեռնամուխ է եղել մի շարք կարևոր գիտահետազոտական պրոբլեմների ուսումնասիրության գործին, որոնք բխում են մեր պարտիայի Կենտրոնական կոմիտեի Սեպտեմբերյան պլենումի որոշումների ոգուց և նպաստում են մեր ներկրի գյուղատնտեսության, արդյունաբերության և կուլտուրայի հետագա և ավելի բարձր զարգացմանը:

Վ. Ք.

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ, ՆՎԻՐՎԱԾ ՍՈՎԵՏԱ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅԱՆ ՄԻԱՄՍՅԱԿԻՆ

1953 թ. նոյեմբերի 21-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և Երևանի Մոլոտովի անվան Պետական համալսարանի համատեղ զիտական սեսիան: Նվիրված սովետա-գերմանական բարեկամության միաժայակին: Սեսիայի հանդիսավոր նիստին մասնակցեցին Հայաստան հյուր եկած գերմանա-սովետական զեկուցաչիայի անդամները: Ներածական խոսքով սեսիան բաց արեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի վիցե-պրեզիդենտ Մ. Ներսիսյանը: Պատասխան ճառով ելույթ ունեցավ գերմանական զեկուցաչիայի ներկայացուցիչ պրոֆեսոր Կինասոր: Այնուհետև կարդացվեցին հետևյալ զեկուցումները. 1) Գերմանական կյասիկ դրամատուրգիան հայ բեմի վրա: Զեկուցող՝ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Գ. Ստեփանյան:

2) Աննա Զեզերսի վեպերը: Զեկուցող՝ Ֆիլոլոգիական գիտությունների թեկնածու Է. Պետրոսյան:

3) Իոհաննես Բեխերի ստեղծագործությունը: Զեկուցող՝ զոցենտ Բ. Յուզբաշյան: